ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

15-ը մայիսի 2024թ.

ՈՒՂԵՐՁ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից մայիսի 15-ը հռչակվել է որպես Ընտանիքի միջազգային օր, որն ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում: Այս օրը լավագույն առիթն է արժևորելու ընտանիքների առանցքային դերը ազգապահպանության, առողջ հասարակության ձևավորման և պետության կայացման հիմքում: Ազգային արժեհամակարգ, մարդկային բարձր որակներ սերմանող փոքր ընտանիքները մեր երկրի հզորացման և առաջընթացի մեծ հենասյուներն են, ուստի նրանց իրավունքներն ու տարաբնույթ խնդիրները մշտապես պետք է լինեն յուրաքանչյուրիս, հատկապես պետական կառույցների, ՏԻՄ-երի և հանրության կարող ուժերի հոգածության ներքո:

Մեր ուշադրության կենտրոնում են հատկապես խոցելի ընտանիքների կարիքները, որոնց հետ կապված Աբովյանի համայնքապետարանի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժինը, «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» ՀՈԱԿ-ը պարբերաբար իրականացնում են աջակցության ծրագրեր, ինչպես նաև համագործակցում տարբեր կազմակերպությունների հետ՝ շահառու ընտանիքների խնդիրները մեղմելու նպատակով: Ամիսներ շարունակ համայնքապետարանի առանձնահատուկ ուշադրության ներքո են նաև համայնքում բնակություն հաստատած հազարավոր արցախցի ընտանիքները:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ընտանիքը մեզ համար բարձր արժեք է, հարազատ ու թանկ միջավայր, որին նվիրված այս գեղեցիկ օրվա կապակցությամբ շնորհավորում եմ բոլոր հայ ընտանիքներին և մաղթում քաջառողջություն, ներդաշնակություն և ընտանեկան ջերմություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ